

## ԿՈՂՊԱՅ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ.

Սորանից տասն տարի առաջ՝ Հանգուցեալ Գրիգոր Արքեպիսկոպոս Մուշեղեանը այցելելով հիմն ի վեր տապալած բաղմադարեան Արմա-էիր և Երեանդակերտ յիշատակաց արժանի մարաքաղաքների տերակ-ներին, որոնք Կողպից 2/։ ժամ հեռաւորութեամբ դէպի արևելք են գտնվում, գնաց Կողպի Կողպը իւր շրջապատ հնութիւններով և գլխա-ւորապէս աղաչանբով, որ գրաւած է շատերի ուշադրութիւնը՝ շատ հաճելի եկաւ Սրբազնին, Ուստի մեծ հետաքրքրութեամբ նշանաւոր տեղերը տեսնելուց յետոյ, կամեցաւ մի բարի յիշատակ ևս թողնել Կողպում, եւ այս պատճառով ևս գիւղի պատուաւոր անձինքներից մի մասնաժողով կազմելով, յորդորեց նոցա հայ մանուկների կրթու-թեան համար հոգալ։

1874 թ. Սեպտեմբեր ամիսն էր. գիւղի մի բարձրաւանգակ տեղում հոգեւորականաց գասը համախուռն բազմութեամբ կատարումէր մեծ հանգես. այդ գպրոցի հիմնարկութեան օրհնութիւնն էր, որ հանգու-ցեալ Սրբազն հօր խորհրդով և շնորհիւ կատարումէին Հետևեալ օրը բարի Հայրը իւր բարենպատակ գործերը կատարած, իւր օրհնութիւնը տալով գիւղին և գիւղացւոց՝ հեռացաւ դէպի Ա. Էջմիածին, յուսալով որ պարզիւն չեն մնալ այն բարի սերմերը, որ սերմանեց գպրոցի հա-մար. Սակայն Սրբազնի սերմանած բարի սերմը չըկարողացաւ ատո-քանալ, և հիմնարկութիւնից չորս տարի յետոյ գպրոցական շինու-թեան որմերը արեգակի և անձրեսի տակ անխնամ մնալով սկսեցին քսՄ-քայուել. որովհետեւ ընկար մէկը, որ հոգար.

Վերջապէս 1878 թուի Յուլիս ամսոյ 11 Բարեկրօն Յովսէփ Քահանայ Տէր Յարութիւնեանցի մասնակցութեամբ մի մասնաժողով կազմուեց գպրոցի կառուցման համար. ժողովում Պ. Մնացական Տէր Յովհան-նիսեանը խոստացաւ գպրոցի շինութեան ողջ պարգաները ինքն պատ-րաստել և կատարեց իւր խոստումը, անձնական նեղութիւնները և գոր-ծերը մէկ կողմ թողնելով գնաց Ալէ քսանդրապոլ, և այնտեղից գնեց երկաթեղէնները, Կարսից բերեց հարկաւ որելի փայտեղէնները հասա-րակութեան ծախքովը. Տէր Յովհաննիսեանին աջակից եղան պարո-նայք, — Արքահամ Արգարեան, Յովհաննէս Եղիազարեան և Յովհան-նէս Տէր Առաքելեան (այժմ հանգուցեալ), որոնք սկսեցին հոգ տանել և շինել գպրոցը. Պարոցական շինութիւնը այժմ պատրաստ է. ունի ե-րեք բաժանմունք, որք են մի նախասենեակ և երկու սենեակ գասա-րանների համար. Բայց սակայն շենքը գպրոց գարձնելու համար հարկա-ւոր են գպրոցական պարագայք, օրինակ. նստարաններ, գրասեղան. ա-թոռ և գրատախտակ, ուսուցիչներ և աշակերտներ, որոնցով է միայն գպրոցը գպրոց. Պարոցական գործի անյաջողութեան պատճառն են ոմանք իրանց անտարբերութեամբ և հակառակասիրութեամբ. Պարոցա-կան շինութեան աւարտուելու օրից տակաւին միանգամ հոգաբարձական նիստ եղած չէ գպրոցը բանալու կամ չըբանալու համար. Խօսքով ամեն բան անում են, աշակերտներ են ժողովում, Հայոց և Թուսաց լեզուների համար ուսուցիչներ են հրաւիրում. Բայց ամեն խօսքերով բարիքը անմիաբանութեան զոհ գնալով՝ ցընդումէ և մոռացութեան է տրվում.

Գիւղի հասարակ աղքատ գասը որ տաժանելի աշխատութեամբ իւր օրական պարենը հազիւ է հայթայթում, միջոց չունի հոգալու. իսկ հարուստները. — Հարուստները իրանց եսականութեան զոհ են դարձ-նում սուրբ գործը և իրանց որդուց գաստիարակութիւնը համեմատե-լով նոցա եսականութեան ու կըքի հետ կորցնումէ իւր արժէքը.

Այս մասին Թեմական Տեսչի Պաշտօնակատար Պ. Պերճ Պուշեանցի ուշագրութիւնն ենք խնդրում, և յուսով ենք, որ փութով հոդ կըտա-նէ Կողպի գպրոցի բացման և բարեկարգութեան համար. անկարելի

և ապարդիւն չըշամարելով մի այլպիսի վսեմ ձեռնարկութեան պիտանաւորութիւնը :

Արշակ Պալասանեան Կողպացի:

ՊԱՆԴՈՒԽՏ ՄԸՆԵՑՈՒ ՈՒԽՏԸ.

Թու, քաղցր Աստուած, բաշխէ էս մէկ դիր,  
Օր խալաթ էրի՝ թողի տուն, էրկիր.

Իմ խըղճուկ պապ, մամ՝ լալով թորկեցի,  
Նարիպ լուծի տակ՝ զիզսի ծռեցի.

Մացեր եմ շիվար,  
Կ'ուլամ՝ չըկայ ճար:

Կուղիմ օր գառնամ. թըխ մըր տուն քէլէմ,  
Աստակսի քիչ է՝ փշուրմ առ կէնեմ.  
Թէ օր, թէ զիշեր՝ սիրտսի կըվառի,  
Լալով աչքերուս լուս կըխաւարի: —  
Ճժերս քրդու ձեռ:  
Յեսիր են մացեր:

Թող թորա էղնի՝ էլ թամախ չէնեմ,  
Նարիպ տեղ քելէմ՝ իմ ճժեր թորկեմ.  
Թալիմ իմ բերան մըր էրկրի փոշին,  
Անուշ է էնիկ՝ քանց էսոնց օսկին.  
Փշուր մ՝ խաց ապով՝  
Նարիպ եմ տարով:

Գառնամ թըխ էրկիր՝ թըխ իմ ազգական,  
Որտեխ կան պապուս, մամուս գերեղման.  
Թող էնտեխ ապրիմ ես չուր օր մախուան,  
Չուր օրմէլ սև քար քաշեն իմ վրան,  
Ես լէ էնոնց պէս՝  
Պըծիմ աշխըշէս:

Գարձաւ պանդութար օտար աշխարհից՝  
Պանդիստութեան լուծն ձգեր իւր վզից.  
Սարեր ու ձորեր անցաւ ու գնաց,  
Հասաւ իւր երկիր ու այնտեղ մնաց՝  
Մերթ ծիծաղ, մերթ լաց՝  
Մէկմէկու խառնած:

Գրաշար Ներսէս Մ. Տ. Աւետիքեանց: